/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ռուսաստանի Դաշնություն / Մոսկվա / 31.05 - 04.06.2021թ.

- **Նպատակը**

Համաշխարհային Բանկի «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում կայացել է «Աշխատանքային ռեսուրսների հաշիվների կազմում» թեմայով լրացուցիչ մասնագիտական ուսուցում: Մասնագիտական ուսուցման ծրագրի նպատակներից է ծանոթանալ Աշխատանքային ռեսուրսների (Աշխատանքի հաշիվների) կազմման ընդհանուր սկզբունքներին, Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջարկվող չորս քայլ-գործընթացներին և նկարագրել Աշխատանքի հաշիվ կազմելու կարևորությունն ու օգուտները:

- **Քննարկված թեմաները**

Դասընթացի ծրագրի շրջանակում ներկայացվել են Աշխատանքի հաշվի հայեցակարգային շրջանակը և սկզբունքները, որոնց միջոցով հնարավոր է միմյանց հետ համադրել և ինտեգրվել տարբեր աղբյուրներից ստացվող աշխատաշուկայի տվյալները՝ աշխատաշուկայի համախառն վիճակագրությանը համահունչ և ստեղծել աշխատանքի շուկայի համակողմանի, հաշվեկշռված ցուցանիշների շարք:

Դասընթացի օրակարգում նախատեսված էին հետևյալ թեմաները.

1. Ակնարկ Աշխատանքի հաշիվների բնութագրական առանձնահատկությունների մասին,
2. Աշխատանքի հաշիվների իրականացման համար օգտագործվող հայեցակարգային շրջանակ,
3. Տվյալների / հասկացությունների ինտեգրման վիճակագրական բիզնես գործընթացներ
4. Աշխատաշուկայի շարժընթացը նկարագրելու դժվարություններ և սահմանափակումներ,
5. Աշխատաշուկայի զարգացման միտումների վերաբերյալ տվյալների աղբյուրների և տեղեկատվության բազմազանություն: Տվյալների աղբյուրների միջև հակասական արդյունքներ. դիտարկվող բնակչության տարբեր շրջանակներ, չափման տարբեր միավորներ, տարբեր դիտարկվող ժամանակահատվածներ, տարբեր սահմանումներ և դասակարգումներ,
6. Ինչպե՞ս հաղթահարել այդ դժվարությունները աղբյուրների, ցուցանիշների, սահմանումների ինտեգրված շրջանակներում:
7. Աշխատանքի շուկայի տվյալների և վիճակագրական այլ համակարգերի միջև կապերը:

Դասընթացի շրջանակում ներկայացվելիք առանցքային հարցերից էին նաև տվյալներ արտադրողներ-շահառուներ-սպառողներ համագործակցության կարևորությունը՝ առանց որի անհնարին է Աշխատանքի հաշիվների կազմումը:

Դասընթացի մասնակիցները ներկայացրեցին Հայաստանի աշխատանքի շուկայի վիճակագրության շրջանակում Աշխատանքի հաշիվների կազմման պոտենցիալ հնարավորությունները՝ առկա մարտահրավերները և դրանց հաղթահարման վերաբերյալ պատկերացումները:

Դասընթացի արդյունքում Հայաստանում առկա տեղեկատվական աղբյուրների շրջանակում (Աշխատուժի հետազոտություն, Տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտություն, կազմակերպություններից ստացվող հաշվետվություններ, կազմակերպությունների հետազոտություն, բիզնես ռեգիստր, վարչական ռեգիստրներ և այլն) փորձ կարվի ուսումնասիրել Աշխատանքի հաշվի յուրաքանչյուր բաղադրիչի մեթոդաբանական ուժեղ և թույլ կողմերը, դրանց միջև հնարավոր համադրումները, տեղեկատվական բացերի լրացման հնարավորությունները, սխալանքի գնահատման մեթոդները և տվյալների հաշվեկշռումը:

Դասընթացը կարող է լինել գործընթացի մեկնարկ՝ պետական վիճակագրական աշխատանքների միջնաժամկետ ծրագրերում ներառելու Աշխատանքի հաշիվների ներդրումը և ապա՝ շարունակաբար բարելավելու հաշվվի կազմման յուրաքանչյուր փուլը:

- **Արդյունքները**

Մասնագիտական ուսուցումն արժեքավոր էր որոշակիորեն ընդհանուր անցյալ և անցումային ժամանակաշրջանին բնորոշ նմանատիպ և տարաբնույթ դժվարություններ ունեցող ԱՊՀ տարածաշրջանի երկրների, ինչպես նաև զարգացման տարբեր փուլերում գտնվող այլ երկրների փորձի, մարտահրավերների և քաղված դասերի ներկայացումների, քննարկումների հիման վրա ընդլայնելու գիտելիքների շրջանակը՝ դրանք աշխատանքի և ազգային հաշիվների վիճակագրության կատարելագործմանը ծառայեցնելու տեսանկյունից:

Մասնակցությունը դասընթացին հնարավորություն ընձեռեց.

ա. գնահատելու Հայաստանում Աշխատանքի հաշիվների կազմման ասպարեզում առկա բացերը.

բ. այլոց փորձով ուրվագծելու խնդիրների լուծման ուղիները.

գ. հստակեցնելու հաշիվների կազմման խորությունը՝ երկրի կարիքներին և ժամանակի պահանջներին համահունչ:

- **Նշումներ**

Հանդիպումներին մասնակցում էին աշխատանքի վիճակագրության բաժնի ևս երեք աշխատակիցներ:

Ուսուցողական ծրագիրն իրականացվում է «GOPA worldwide Consultants GmbH» խորհրդատվական ընկերության աջակցությամբ՝ Վիճակագրական կոմիտեի կողմից առաջարկված աշխատակիցներին ուսումնական ծառայությունների մատուցման ծրագրի շրջանակում:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» TF0A4543 դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան